Հավելված N 430
ՀՀ էկոնոմիկայի նախարարության
գլխավոր քարտուղարի
2019 թ.հուլիսի 26-ի N 636-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱԺՆԻ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հանրային ներդրումների վարչության (այսուհետ՝ Վարչություն) հանրային ներդրումների զարգացման բաժնի (այսուհետ՝ Բաժին) ավագ մասնագետ (ծածկագիր՝ 23-32.13-Մ4-5)

1.2. Ենթակա և հաշվետու է

Բաժնի ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Բաժնի ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

Հայաստան, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Միհեր Մկրտչյան 5

2.Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1) մասնակցում է հանրային ներդրումների կառավարման օրենսդրության, այդ թվում՝ հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների սահմանման օրենսդրական հիմքերի, հանրային ներդրումային ծրագրերի և հայեցակարգերի նախագծերի (նախա)գնահատման և առաջնահերթությունների սահմանման մեթոդաբանության և ընթացակարգերի մշակման աշխատանքներին.

2) մասնակցում է հանրային ներդրումային ծրագրերի կազմման և ներկայացման նվազագույն պահանջների մշակման և դրանց կիրառման աշխատանքներին.

3) իրականացնում է հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի հավաքագրման և դիտանցման աշխատանքներ, մասնակցում է հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ մեթոդաբանական աջակցության տրամադրման աշխատանքներին.

4) մասնակցում է հանրային ներդրումների կառավարման շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպման աշխատանքներին.

5) մասնակցում է հանրային ներդրումների կառավարման շրջանակներում փաստաթղթերի օրինակելի ձևերի և խորհրդատվական ուղեցույցների մշակման աշխատանքներին.

6) մասնակցում է հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի (նախա)գնահատման աշխատանքներին.

7) մասնակցում է հանրային ներդրումային ծրագրերի արդյունքների՝ հաշվետվությունների վրա հիմնված գնահատման աշխատանքներին.
8) իրականացնում է հանրային ներդրումային ծրագրերի շտեմարանի վարման աշխատանքներ.
9) մասնակցում է միջազգային կազմակերպությունների հետ հանրային ներդրումների կառավարման համակարգի քաղաքականության մշակման աշխատանքներին:

Իրավունքները՝

• համապատասխան մարմիններից ստանալ լրացուցիչ տեղեկատվություն հանրային ներդրումների կառավարման օրենսդրության, այդ թվում՝ հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, մշակման, գնահատման և առաջնահերթությունների սահմանման օրենսդրական հիմքերի, հանրային ներդրումային ծրագրերի և հայեցակարգերի նախագծերի (նախա)գնահատման և առաջնահերթությունների սահմանման մեթոդաբանության և ընթացակարգի վերաբերյալհամապատասխան մարմիններից ստանալ հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերջնական փաթեթները վերջիններից (նախա)գնահատման համար.
• մասնակցել հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի հավաքագրման և դիտանցման, հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ մեթոդաբանական աջակցության տրամադրման շրջանակում կազմակերպվող մասնագիտական քննարկումներին"
• ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն հանրային ներդրումների կառավարման շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումների, ուսուցման և վերապատրաստման դասընթացների կազմակերպման համար.
• ստանալ հանրային ներդրումների կառավարման շրջանակներում փաստաթղթերի օրինակելի ձևերի և խորհրդատվական ուղեցույցների մշակման վերաբերյալ տեղեկատվություն.
• հանրային ներդրումային ծրագրերի շտեմարանի վարման աշխատանքների շրջանակներում համապատասխան մարմիններից ստանալ հանրային ներդրումային ծրագրերի նախագծեր"
• մասնակցել հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ քննարկումներին:

Պարտականությունները՝

• ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ հանրային ներդրումների կառավարման օրենսդրության, այդ թվում՝ հանրային ներդրումային ծրագրերի վերհանման, գնահատման և առաջնահերթությունների սահմանման օրենսդրական հիմքերի, հանրային ներդրումային ծրագրերի և հայեցակարգերի նախագծերի (նախա)գնահատման և առաջնահերթությունների սահմանման մեթոդաբանության և ընթացակարգի նախագիծը մշակելու վերաբերյալ.
• կազմել հաշվետվություններ հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի հավաքագրման և դիտանցման, հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ.
• ուսումնասիրել և ներկայացնել առաջարկություններ հանրային ներդրումների կառավարման շրջանակներում կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ, ուսուցման և վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու համար.
• կազմել հաշվետվություններ հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի (նախա)գնահատման վերաբերյալ.

• հավաքագրել և մշակել հանրային ներդրումների կառավարման շրջանակներում փաստաթղթերի օրինակելի ձևերի և խորհրդատվական ուղեցույցների նախագծերը.
• վարել հանրային ներդրումային ծրագրերի շտեմարանը"
• ներկայացնել առաջարկություններ համապատասխան միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումների և ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ,
• ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվություն հանրային ներդրումային ծրագրերի նախագծերի վերաբերյալ քննարկումներին:

3.Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ տնտեսագիտության բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ:

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս համապատասխան մարմնի այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների, այլ մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս համապատասխան մարմնի ներսում և համապատասխան մարմնից դուրս ձևավորված մասնագիտական աշխատանքային խմբերում:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: